ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

22 փետրվարի 2024 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 15 (տասնհինգ) անդամները:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:

Նիստին ներկա էր Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու Նոբաթ Շուշանյանը, աշխատակազմի իրավաբան Հովհաննես Լալայանը, ինչպես նաև համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հրավիրած անձինք՝ Խաչիկ Դիլաքյանն ու Վալերի Գրիգորյանը, «Արդար Հայաստան» խմբակցության հրավիրած անձ Արայիկ Աթոյանը և «Միասնություն» խմբակցության հրավիրած անձ Վլադիմիր Միրզոևը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 15-ը, նիստն իրավազոր է և առաջարկեց սկսել նիստը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 03 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 22-ի չորրորդ նստաշրջանի արտահերթ թիվ 03 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու նիստերի անցկացման վայրը որոշելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 79 բնակարանը Գոհար Արշակի Յայլոյանին անհատույց օտարելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 21 բնակարանը Հայկանուշ Գրիգորի Գրիգորյանին անհատույց օտարելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 82 բնակարանը Ամալյա Սերոբի Կարապետյանի ընտանիքին անհատույց օտարելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 26 բնակարանը Վարսենիկ Սարգսի Տեպոյանի ընտանիքին անհատույց օտարելու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 19-ի N 32-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

Օրակարգը հաստատվելուց հետո Հակոբ Բալասյանը ներկայացրեց, որ խմբակցությունների կողմից հրավիրված անձինք կարող են ներկա գտնվել նիստին, բայց օրակարգի հարցերի հետ կապված, կամ այլ հարցերով չեն կարող մասնակցել, քանի որ նախապես չի ներկայացվել նիստին մասնակցության անհրաժեշտությունը և ներկայացվող հարցը:

Նիստի դահլիճից դուրս եկավ «Արդար Հայաստան» խմբակցության հրավիրած անձ Արայիկ Աթոյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հրավիրած անձ Վալերի Գրիգորյանը ավագանու անդամներին համախմբված աշխատելու կոչ արեց, որից հետո ևս դուրս եկավ նիստի դահլիճից, նրան հետևեց Խաչիկ Դիլաքյանը:

Ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 63-Ա որոշմամբ ընդունված համայնքի ավագանու կանոնակարգի 1-ին գլխի 3-րդ պարբերությունը՝ ***ավագանին որոշում է.***

1.Բյուրեղավան համայնքի ավագանու նիստերն անցկացնել Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց հասցեում գտնվող Մշակույթի տան փոքր դահլիճում:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 79 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳՈՀԱՐ ԱՐՇԱԿԻ ՅԱՅԼՈՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱԹ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով

Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Գոհար Արշակի Յայլոյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.27 քմ ընդհանուր մակերեսով 79 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Գոհար Արշակի Յայլոյանին՝ ծնված 1974 թվականի օգոստոսի 16-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գոհար Արշակի Յայլոյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ – 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 10-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 21 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱԹ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Հայկանուշ Գրիգորի Գրիգորյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 15.17 քմ ընդհանուր մակերեսով 21 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Հայկանուշ Գրիգորի Գրիգորյանին՝ ծնված 1966 թվականի մարտի 05-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայկանուշ Գրիգորի Գրիգորյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 11-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 82 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՄԱԼՅԱ ՍԵՐՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱՐ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ամալյա Սերոբի Կարապետյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.4 քմ ընդհանուր մակերեսով 82 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ամալյա Սերոբի Կարապետյանի ընտանիքին.

ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝

Ամալյա Սերոբի Կարապետյանին՝ ծնված 1956 թվականի հոկտեմբերի 08-ին,

Արայիկ Սերոբի Առաքելյանին՝ ծնված 1960 թվականի ապրիլի 25-ին,

Համլետ Արայիկի Առաքելյանին՝ ծնված 1987 թվականի նոյեմբերի 26-ին,

Հրայր Արայիկի Առաքելյանին՝ ծնված 1992 թվականի սեպտեմբերի 22-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ամալյա Սերոբի Կարապետյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 12-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 26 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍԻ ՏԵՊՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱՐ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Վարսենիկ Սարգսի Տեպոյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 38.97 քմ ընդհանուր մակերեսով 26 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Վարսենիկ Սարգսի Տեպոյանի ընտանիքին.

ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝

Վարսենիկ Սարգսի Տեպոյանին՝ ծնված 1966 թվականի սեպտեմբերի 12-ին,

Գևորգ Գրիգորիի Տեպոյանին՝ ծնված 1995 թվականի ապրիլի 12-ին,

Տաթևիկ Գրիգորի Գրիգորյանին՝ ծնված 1992 թվականի սեպտեմբերի 12-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վարսենիկ Սարգսի Տեպոյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 13-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈԲԱԹ ՇՈՒՇԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների պահպանման, օտարման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Ջուլետա Սերգեյի Գրիգորյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 19-ի «Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N 74 բնակարանն անհատույց Համբարձում Գրիգորյանի ընտանիքին օտարելու մասին» N 32-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման վերնագրում «Համբարձում Գրիգորյանի ընտանիքին» բառերը փոխարինել «Ջուլետա Սերգեյի Գրիգորյանին» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 52.92 քմ ընդհանուր մակերեսով 74 բնակարանը անհատույց օտարել (նվիրել) Ջուլետա Սերգեյի Գրիգորյանին՝ ծնված 1956 թվականի հունվարի 02-ին:».

3)որոշման 3-րդ կետում «Համբարձում Գրիգորի Գրիգորյանի» բառերը փոխարինել «Ջուլետա Սերգեյի Գրիգորյանի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ա/

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մարտի 14-ը, ժամը՝ 10:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 7

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ներկայացրեց, որ՝ ի պատասխան իր կողմից ներկայացրած բացակայությունների մասին տեղեկանքի, Բյուրեղավան համայնքի ավագանու «Արդար Հայաստան» խմբակցության ղեկավար ***Արմեն Սարգսյանը***, անդամներ ***Վալենտինա Կաղիյանը*** և ***Սոս Չիլինգարյանը*** 2024թ. փետրվարի 06-ին ներկայացրել է գրություն ավագանու նիստերից բացակայության պատճառների մասին՝ նշելով, որ նիստերին չմասնակցելը պայմանավորված է եղել առողջական, աշխատանքային և ընտանեկան պայմաններով, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի և համայնքի ղեկավարի կողմից շարունակաբար ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով բավարար պայմաններ չստեղծելով:

Բյուրեղավան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներ Վլադիմիր Վարդևանյանը, Արշալույս Վարդանյանը, Աշխեն Մարուքյանն ու Ավագ Սահակյանը ներկայացրել են ավագանու նիստերից իրենց բացակայության պատճառների մասին:

2024թ. փետրվարի 12-ին ներկայացրած գրությամբ ***Վլադիմիր Վարդևանյանը*** հայտնել է, որ՝ 24.11.2023թ.-ին և 12.12.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 14 և թիվ 16 նիստերին բացակայել է վերջիններիս անցկացման ժամանակ ԲՈՒՀ-ում դասի ներկա գտնվելու բերումով:

2024թ. փետրվարի 12-ին ներկայացրած գրությամբ ***Արշալույս Վարդանյանը*** հայտնել է, որ՝ 01.09.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու արտահերթ թիվ 10 նիստին բացակայել է Գիտելիքի օրվա կապակցությամբ կազմակերպված գործնական ծանրաբեռնվածության բերումով,

13.10.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 13 նիստի ժամանակ մասնագիտական զբաղվածությամբ պայմանավորված եղել է աշխատանքի վայրում, ինչի ժամերի հետ անհամատեղելիության պատճառով չի կարողացել ներկայանալ նիստին,

24.11.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 14 նիստին չի մասնակցել գործնական ծանրաբեռնվածության բերումով,

12.12.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 16 նիստի ժամանակ մասնագիտական զբաղվածությամբ պայմանավորված եղել է աշխատանքի վայրում, ինչի ժամերի հետ անհամատեղելիության պատճառով չի կարողացել ներկայանալ նիստին:

2024թ. փետրվարի 12-ին ներկայացրած գրությամբ ***Աշխեն Մարուքյանը*** հայտնել է, որ՝

13.10.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 13 նիստի ժամանակ ընտանիքի անդամի առողջական վիճակով պայմանավորված եղել է բժշկական հետազոտությունների, ինչի բերումով չի կարողացել ներկա գտնվել նիստին,

24.11.2023թ.-ին և 12.12.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 14 և թիվ 16 նիստերին չի մասնակցել աշխատանքային ժամի հետ անհամատեղելիության պատճառով:

2024թ. փետրվարի 12-ին ներկայացրած գրությամբ ***Ավագ Սահակյանը*** հայտնել է, որ՝

24.11.2023թ.-ին և 12.12.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 14 և թիվ 16 նիստերին չի մասնակցել ատամնաբուժական կլինիկա այցելուների անհետաձգելի բուժման պատճառով:

Բյուրեղավան համայնքի ավագանու «Միասնություն» խմբակցության անդամ ***Արմեն Հայրապետյանը*** տեղեկացրել է, որ 12.09.2023թ.-ին և 24.11.2023թ.-ին կայացած համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 11 և թիվ 14 նիստերին չի մասնակցել երկրից դուրս գտնվելու պատճառով:

Լիլիթ Ավուշյանը հայտնեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արփինե Սուքիասյանը 2024 թվականի հունվարի 30-ին ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ ինքը և Աննա Մկրտչյանը կայացած մեկ նիստից բացակայություններ չեն ունեցել, իսկ Արշալույս Վարդանյանը բացակայել է նիստից (12.12.2023թ.):

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2024 թվականի հունվարի 30-ին ներկայացրել է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որում հայտնել է, որ ինքը, Վարդան Սուքիասյանը և Կարապետ Հարությունյանը կայացած չորս նիստերից բացակայություններ չեն ունեցել, Վլադիմիր Վարդևանյանը բացակայել է երկու նիստերից (24.11.2023թ. և 11.12.2023թ.), Ավագ Սահակյանը և Վալենտինա Կաղիյանը ոչ մի նիստի չեն մասնակցել:

Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծած ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ էդիկ Պիճիկյանը 2024 թվականի հունվարի 30-ին ներկայացրել է նիստերից ավագանու անդամների բացակայությունների մասին տեղեկանք, որում հայտնել է, որ ինքը և Արմեն Հայրապետյանը կայացած երեք նիստերից բացակայություններ չեն ունեցել, Աշխեն Մարուքյանը և Արմեն Սարգսյանը ոչ մի նիստի չեն մասնակցել:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ _____

ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ _____

ԱՐՓԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԷԴԻԿ ՊԻՃԻԿՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ _____

ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ _____

ԱՎԱԳ ՍԱՀԱԿՅԱՆ _____

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱՇԽԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱՂԻՅԱՆ _____

ՍՈՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ